

Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
սեպտեմբերի 13-ի N 1170 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆՆԵՐԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՇՎԵԿՇՈՒ ՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետությունում օգտակար հանաձոնների պաշարների պետական հաշվեկշռի (այսուհետ՝ հաշվեկշիռ) վարման ընթացակարգի հետ կապված հարաբերությունները:

2. Հաշվեկշիռը վարում է Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):

3. Հաշվեկշիռը կազմվում է՝ հիմք ընդունելով պետական ընդերքաբանական փորձաքննության եզրակացության հիման վրա հաստատված օգտակար հանաձոնների պաշարները, և փոփոխվում է ընդերքօգտագործողների կողմից լիազոր մարմին ներկայացված տարեկան հաշվետվություններին (այսուհետ՝ հաշվետվություն) համապատասխան: Այն պետք է պարունակի տեղեկություններ արդյունաբերական նշանակություն ունեցող հանքավայրերում պարփակված՝ բոլոր տեսակի օգտակար հանաձոնների պաշարների քանակի, որակի և ուսումնասիրվածության աստիճանի, գործող կամ նախագծվող արդյունաբերական կազմակերպության՝ հաստատված պաշարներով ապահովվածության մասին:

4. Լիազոր մարմինը պետական ընդերքաբանական փորձաքննության եզրակացությունը և օգտակար հանաձոնների հաստատված պաշարների մասին տեղեկությունն ստանալուց հետո 15-օրյա ժամկետում հաշվեկշռի վարման մատյանում կատարում է համապատասխան գրանցում:

5. Հաշվեկշռի վարման մատյանում գրանցման ենթակա են բոլոր տեսակի (պինդ, հեղուկ և գազային) օգտակար հանածոների հաստատված պաշարները:

6. Հաշվեկշիռը կազմվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ՝ ըստ հանքավայրերի ու տեղամասերի, ինչպես նաև՝ ըստ օգտակար հանածոների արդյունահանման և օգտագործման նպատակային նշանակության:

7. Հաշվեկշռում հանքավայրերը խմբավորվում են ըստ մարզերի, որոնցում հանքավայրերը բաշխվում են ըստ արդյունաբերական իրացման հետևյալ դասակարգման՝

1) շահագործվող ու շահագործման նախապատրաստվող հանքավայրերի լրահետախուզման փուլում գտնվող,

2) շահագործվող,

3) պահուստային:

8. Հաշվեկշռում փոփոխությունները և օգտակար հանածոների մարված պաշարների դուրսգրումը կատարվում են ընդերքօգտագործողների կողմից ներկայացված մարկշեղերական չափագրումների արդյունքում կազմված հաշվետվությունների հիման վրա:

9. Լիազոր մարմինը հաշվետվություններն ստանալուց հետո ամփոփում է դրանք և մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 1-ը հաշվեկշռում կատարում է համապատասխան փոփոխություններ:

10. Օգտակար հանածոների արդյունահանման, ինչպես նաև երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքում արդյունաբերական նշանակությունը կորցրած կամ չհավաստված պաշարները դուրս են գրվում պետական ընդերքաբանական փորձաքննության եզրակացության հիման վրա՝ այն ստանալուց հետո 15-օրյա ժամկետում հաշվեկշռի վարման մատյանում կատարելով համապատասխան փոփոխություններ:

11. Հաշվեկշիռը գրանցվում և դրանում կատարվող փոփոխություններն իրականացվում են հաշվեկշռի վարման մատյանում, որի օրինակելի ձևը սահմանում է լիազոր մարմինը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ